

† † † HOKEHANKISD † † †

HOVANNES KAZANJIAN (17th Anniversary)

Beloved Father, Grandfather and Great Grandfather

Requested by: Der Hayr and Board of Trustees

Kevork and Elizabeth Kazanjian and Hovannes Kazanjian
Maral Kazanjian Bozadjian and Tavit, Kevork, Siroun and Masis
Bozadjian

ARTO ALBEYAZ (28th Anniversary)

**TO THE SOULS OF ALBEYAZ, BALJIAN,
TANIELIAN AND GHAZELIAN FAMILIES**

Requested by: Der Hayr and Board of Trustees

Zvart Albeyaz
Sergio and Janet Albeyaz Tovar
Mike and Alice Krikorian and Family

Ա Ն Ո Ւ Ա Ն Ա Կ Ո Չ Ո Ւ Թ Ի Ի Ն

Հայաստանեայց Առաքելական Եկեղեցւոյ Տէրունական անշարժ տօներէն մէկն է Անուանակոչութեան տօնը, որ կը նշուի Յունուարի 13-ին:

Ըստ Ղուկաս աւետարանիչին, Յովսէփ ու Մարիամ մարդեղացեայ Աստուածորդին, իր ծննդեան ութերորդ օրը կը տանին Տաճար՝ Աբրահամի եւ Աստուծոյ միջեւ կնքուած ուխտին համաձայն՝ թրփատելու: Թրփատութեան ժամանակ մանուկը կ'անուանեն «Յիսուս», որ կը նշանակէ փրկիչ: «Ութ օր ետք, երբ մանուկը թրփատելու ժամանակը հասաւ, Յիսուս կոչեցին զայն, այն անունով որ հրեշտակը տուած էր անոր՝ տակաւին Մարիամի որովայնին մէջ չլղացած» (Ղուկ. 2:21):

Նուիրական աւանդութեան համաձայն, Մկրտութեան ժամանակ խորհրդակատար քահանան մկրտուողին կու տայ նոր անուն, որովհետեւ մկրտութեան Ս. աւագանէն վերստին ծնողն այլեւս նոր մարդ է (Հմմտ. Յովհ. 3:3, 5-6): Նոյնն է պարագան ձեռնադրութեան եւ օծման ժամանակ:


Տ Ն Օ Ր Հ Ն Է Ք/ Home Blessing

Անոնք, որոնք կը փափաքին Ս. Ծննդեան Տօնին առիթով իրենց բնակարանները օրհնել տալ, թող բարեհաճին հեռաձայնել գրասենեակ (301) 229-8742:

All parishioners who wish to have their homes blessed on the occasion of Christmas should call the Church office to make arrangements (301) 229-8742.

Ս. ԽԱՉ ՀԱՅՑ. ԱՌԱՔԵԼԱԿԱՆ ԵԿԵՂԵՑԻ
SOORP KHATCH ARMENIAN
APOSTOLIC CHURCH

☞ **SUNDAY, JANUARY 13, 2019** ☛



ՉԱՅՆ ԴԿ

ԱՆՈՒԱՆԱԿՈՉՈՒԹԻՒՆ
NAMING OF OUR LORD JESUS CHRIST

«ՀԱՍՄԱՍՏԵՂ ՀԱՅ ԴՊՐՈՑ»Ի
ՅԱՏՈՒԿ ԺԱՍԵՐԳՈՒԹԻՒՆ 9:30-ԻՆ

SPECIAL SERVICE FOR
HAMASDEGH ARMENIAN SCHOOL, 9:30 a.m.
Ս. ՊԱՍԱՐԱԳ ~ DIVINE LITURGY, 10:30 a.m.

Soorp Khatch Armenian Apostolic Church
4906 Flint Drive, Bethesda, MD 20816
Office Hours: 10:00 a.m-2:00 p.m.
Phone: (301) 229-8742; Fax: (301) 229-9393
E-mail: soorpkhatch@verizon.net

Website: www.soorpkhatchchurch.org
Rev. Fr. Sarkis Aktavoukian, Pastor
Home Phone: (301) 977-1863; Cell: (301) 787-5506

DER VOGHORMIA

All Sick



Parishioners

**ՊՕՂՈՍ ԱՌԱՔԵԱԼԻ ԿՈՂՄԷ
ԿՈՂՈՍԱՅԻՆԵՐՈՒՆ ԳՐՈՒԱԾ ՆԱՄԱԿԷՆ**

----- (2 . 8 - 15) -----

Զգոյշ եղէք, որ ոեւէ մէկը ձեր միտքը չգրաւէ իմաստասիրական տեսութիւններով եւ խաբերայական սին խօսքերով, որոնք մարդկային աւանդութիւններու եւ բնութեան ոյժերուն վրայ կը հիմնուին եւ ո՛չ թէ Յիսուս Քրիստոսի ճշմարիտ վարդապետութեան վրայ: Որովհետեւ մարդացած Քրիստոսի մէջ կը բնակի աստուածային բնութեան ամբողջ յիութիւնը: Եւ զուք ձեր կեանքին յիութիւնը գտաք՝ միանալով անոր, որ գլուխն է ոգեղէն աշխարհի բոլոր իշխանութիւններուն եւ պետութիւններուն: Հաւատքի ճամբով երբ Քրիստոսի միացաք, զուք ձեր մեղքերը թօթափեցիք եւ Քրիստոսի թլփատութեամբ ստացած եղաք սրտի թլփատութիւնը: Մկրտուելով՝ անոր հետ միասին թաղուեցաք, եւ անոր հետ ալ յարուցիւն առիք, քանի հաւատացիք Աստուծոյ զօրութեան, որ զայն մեռելներէն յարուցանեց: Քրիստոսի հետ Աստուած ձեզ ալ կենդանացուց, քանի զուք հոգեւորապէս մեռած էիք ձեր մեղքերուն պատճառով, որովհետեւ անթլփատ հեթանոսներ էիք: Այո՛, Աստուած ներեց մեր բոլոր յանցանքները եւ իր իշխանութեամբ ջնջեց մեր օրինազանցութեան համար մեզի դէմ արձակուած դատապարտութեան վճիռը, զայն խաչափայտին գամելով: Այսպիսով անիկա գինաթափ ըրաւ ոգեղէն աշխարհի իշխանութիւններն ու պետութիւնները, յայտնապէս խայտառակելով ու պարտութեան մատնելով զանոնք Քրիստոսի ձեռքով, անոր յարութեան ատեն:

**ՅԻՍՈՒՍ ՔՐԻՍՏՈՍԻ ԱԻԵՏԱՐԱՆԷՆ
ԸՍՏ ՂՈՒԿԱՍԻ**

----- (2 . 21) -----

Ութը օր ետք, երբ մանուկը թլփատելու ժամանակը հասաւ, Յիսուս կոչեցին զայն, այն անունով որ հրեշտակը տուած էր անոր՝ տակաւին Մարիամի որովայնին մէջ չյղացած:

 **SCRIPTURE READINGS** 
COLOSSIANS 2:8-15

See to it that no one takes you captive through hollow and deceptive philosophy, which depends on human tradition and the basic principles of this world rather than on Christ.

For in Christ all the fullness of the Deity lives in bodily form, and you have been given fullness in Christ, who is the head over every power and authority. In him you were also circumcised, in the putting off of the sinful nature, not with a circumcision done by the hands of men but with the circumcision done by Christ, having been buried with him in baptism and raised with him through your faith in the power of God, who raised him from the dead.

When you were dead in your sins and in the uncircumcision of your sinful nature, God made you alive with Christ. He forgave us all our sins, having canceled the written code, with its regulations, that was against us and that stood opposed to us; he took it away, nailing it to the cross. And having disarmed the powers and authorities, he made a public spectacle of them, triumphing over them by the cross.

LUKE 2:21

Jesus Presented in the Temple

On the eighth day, when it was time to circumcise him, he was named Jesus, the name the angel had given him before he had been conceived.

† † †

NAMING OF OUR LORD JESUS CHRIST

Sunday, January 13, the Armenian Church commemorates the naming (and circumcision) of our Lord Jesus Christ in accordance with the Hebrew custom. The commemoration of this event (see Matthew 1:20-23; Luke 1:30-32; Luke 2:21) comes seven days after the Feast of Theophany, which is the eighth day of the octave of Theophany. This event of the naming and circumcision of our Lord resulted in the tradition for newborn children of Christians to be baptized eight days after birth—a tradition that is rarely followed in modern times.

Der Hayr and the Board of Trustees would like to congratulate all those who are named Hovhannes, Hovan, Hovig, John, Garabed, Garo, Garbis and Gary and wish them Good Health and Happiness.